

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-1/

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ՝

ա/ սահմանված կարգով կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում ընթացիկ տարվա համայնքի բյուջեի նախագիծը,

բ/Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ներկայացնում է համայնքի ֆինանսական շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում:

գ/Ընդհանրացնում է ՀՀ օրենսդրության կիրառման պրակտիկան

դ/Նախապատրաստում է համայնքի բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները:

ե/Սույն պաշտոնի անձնագրով նախատեսված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

զ/իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է՝

- Միջնակարգ կրթություն

- -Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2015 թվականի մայիսի 8-ին ժամը 12⁰⁰ , Ջրառատի գյուղապետարանի շենքում:

Դիմող քաղաքացիները Ջրառատի գյուղապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը:

-Դիմում մրցութային հանձնաժողովի անունով/ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակի հետ միասին:

-հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ Կառավարության 3-ի N310 –Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

-հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

-արական սեռի նաձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը,

-մեկ լուսանկար 3x4 չափի

-անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատի գյուղապետարան՝ Արարատյան -8, հեռախոս՝ 0-231-6-62-50 կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն, հասցեն՝ Աբովյան 71, հեռախոս՝ 0-237-2-07-70;

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10-18, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015 թվականի ապրիլի 23-ը: